



ՄՈՒՐԲ ՅԱԿՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ

ԲԱՐԵԿԵՆՈՒԱՆ Ս. ԱՍՏՈՒԾԱԾԱԾԻ ՊԱՀՈՅ

06 ՕԳՈՍՏՈՍ 2017

Կիրակնօրեայ Ընթերցումներ	էջ 1
«Ուխտին Տապանակը» (33)	էջ 2
Ծանուցումներ	էջ 4

ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳՐՔԷՆ (7.1-9)

Հրէաստանի Աքազ թագաւորին օրով, որ Յովաթամի որդին էր եւ Ոգիայի թողը, Ասորիքի Ռասին թագաւորը եւ Իսրայէլի Փակէէ թագաւորը, որ Ռոմելի որդին էր, Երուսաղէմի դէմ պատերազմելու պատրաստուեցան. բայց չկրցան յարձակման անցնիլ: Երբ Աքազ եւ ամբողջ Հրէաստան լուր առին թէ Ասորիքը Եփրեմի հետ դաշնակցած է, թագաւոր եւ ժողովուրդ իրենց սարսափէն սկսան դողալ, այնպէս ինչպէս անտառին ծառերը կը դողան հովին դիմաց:

Այն ատեն Տէրը Եսայիին ըսաւ. «Ե՛լ, հետդ առ քու տղադ որ Շէար-Եաշուբ կը կոչուի, եւ գնա Աքազի քով: Իրեն պիտի հանդիպիս թափիչին արտը տանող ճամբուն վրայ, ջրանցքի վերին աւազանին քով: Այսպէս ըսէ իրեն.–

“Ձգո՛յշ եւ հանդարտ եղիր, տակնուվրայ մի՛ ըլլար ու մի՛ վախնար Ասորիքի եւ Իսրայէլի թագաւորներէն

... ես քեզ հարուածէմ պիտի փրկեմ:

որոնք ձխացող երկու խանձող փայտերու պէս երբ գան իրենց գայրոյթը քու վրադ թափելու՝ ես քեզ հարուածէն պիտի փրկեմ: Ասորիքի եւ Իսրայէլի թագաւորները քեզի համար չար ծրագիր մը յղացան եւ ըսին. ‘Ելլենք Հրէաստան երթանք, մեր կողմը սիրաշահինք հրէաստանցիները կամ բռնադատենք զանոնք եւ անոնց վրայ թագաւոր կարգենք Տաբելի

որդին՝: Բայց այսպէս կ’ըսէ Երկնաւոր Զօրքերու Տէրը.– Այս ծրագիրը պիտի չիրականանայ բնաւ: Որովհետեւ ինչպէս Ասորիքի մայրաքաղաքը Դամասկոսն է եւ Դամասկոսը կառավարողը

Ռասինի տունը, այնպէս ալ Իսրայէլի մայրաքաղաքը Սամարիան է եւ Սամարիան կառավարողը՝ Ռոմելի որդին տունը. բայց ահա վաթսուէնհինգ տարիէն Իսրայէլ պիտի կորսնցնէ իր թագաւորութիւնը: Դուք ալ, նմանապէս, եթէ Տիրոջ չվստահիք՝ դուք ալ պիտի չկարենաք գոյատեւել”»:

... եթէ Տիրոջ չվստահիք՝ դուք ալ պիտի չկարենաք գոյատեւել

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ (13.11-14.5)

Երբ երեխայ էի՝ երեխայի պէս կը խօսէի, երեխայի պէս

կը խորհէի եւ երեխայի պէս կը տրամաբանէի. իսկ երբ տղամարդ դարձայ, բոլոր երեխայական բաները մէկ կողմ դրի: Նոյնպէս ալ մենք այժմ զԱստուած կը տեսնենք աղօտ կերպով, կարծես հայելիի մը մէջէն.

բայց երբ ամէն բանի կատարումը գայ՝ զայն պիտի տեսնենք դէմ առ դէմ: Այժմ միայն մասնակիօրէն կը ճանչնամ զԱստուած, բայց այն ատեն պիտի ճանչնամ ամբողջապէս, ճիշդ ինչպէս ի՛նք գիտ կը ճանչնայ:

Արդ, ուրեմն, միակ մնայուն բաներն են՝ հաւատքը, յոյսը եւ սէրը. իսկ այս երեքէն մեծագոյնը սէրն է:

Ուրեմն սիրոյ հետամուտ եղէք առա-

... այն ատեն պիտի ճանչնամ ամբողջապէս, ճիշդ ինչպէս ի՛նք գիտ կը ճանչնայ:

... հոգեւոր
պարգեւներուն
փափափող
եղէֆ,
մանաւանդ
պատգամա-
խօսութեան...

ւելաբար: Միաժամանակ
հոգեւոր պարգեւներ-
ըուն փափաքող եղէք,
մանաւանդ պատգամա-
խօսութեան, այսինքն՝
մարգարէութիւն ընելու:
Որովհետեւ, օրինակ,
անծանօթ լեզուներով

խօսողը մարդոց չէ՝ որ կը խօսի, այլ Աստուծոյ.
որովհետեւ ոչ ոք զինք կը հասկնայ, թէպէտեւ
անիկա Հոգիին զօրութեամբ խորհուրդներ
կը պատմէ: Մինչդեռ պատգամախօսութիւն
ընողը մարդոց կը խօսի՝ անոնց հաւատքը
ամրապնդելու, զանոնք մխիթարելու եւ
քաջալերելու համար: Լեզուներ խօսողը
միայն ի՛նք կ'օգտուի, մինչդեռ պատգա-
մախօսութիւն ընողը ամբողջ եկեղեցւոյ
չինութիւն կը բերէ: Ես պիտի ուզէի որ բոլորդ
ալ լեզուներ խօսիք, բայց կը նախընտրեմ որ
պատգամախօսութիւն ընէք. որովհետեւ պատ-
գամախօսութիւն ընողը աւելի՛ օգտակար
կ'ըլլայ քան լեզուներով խօսողը, բացի այն
պարագայէն երբ ներկաներուն մէջ գտնուի
մէկը, որ անծանօթ լեզուով խօսուածը
թարգմանէ, եւ ամբողջ եկեղեցին օգտուի:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ (2.1-12)

Քանի մը օրեր ետք Յիսուս վերադարձաւ
Կափառնաում: Անմիջապէս որ լուր
տարածուեցաւ թէ տունին մէջ կը գտնուի,
շատեր հաւաքուեցան հոն, այնքան որ դրան
առջեւ իսկ տեղ չէր մնացեր: Եւ Յիսուս
Աստուծոյ խօսքը կը քարոզէր անոնց:

Այդ միջոցին Յիսուսի բերին անդամա-
լոյծ մը, որ չորս հոգիներ շալկած էին: Երբ
ամբոխին պատճառով չկրցան զայն Յիսուսի
մօտ բերել, քակեցին տունին տանիքը եւ
առաստաղը բանալով՝ անդամալոյծը մահիճով
վար իջեցուցին: Յիսուս անոնց հաւատքը
տեսնելով ըսաւ անդամալոյծին. «Որդեակ,
մեղքերդ ներուած ըլլան քեզի»:

Օրէնքի ուսուցիչներէն ոմանք որոնք հոն
նստած էին, սկսան մտովի քննադատել զայն.
«Ինչպէ՞ս կը համարձակի ասանկ բան ըսել.
ըրածը հայհոյութիւն է: Աստուծոյ զատ ո՞վ

կրնայ մեղքերը ներել»: Յիսուս վայրկեանին
զիտցաւ անոնց մտածումը եւ ըսաւ. «Ինչո՞ւ
այդպէս կը մտածէք: Ո՞ր մէկը աւելի դիւրին
է. անդամալոյծին “մեղքերդ ներուած են
քեզի” ըսելը, թէ “ե՛լ, ա՛ռ մահիճդ եւ տունդ
զնա” ըսելը: Բայց որպէսզի գիտնաք թէ
մարդու Որդին երկրի վրայ իշխանութիւն
ունի մեղքերը ներելու, ահա նաեւ կը բժշկեմ
զայն»: Ու դառնալով անդամալոյծին, ըսաւ.
«Քեզի կ'ըսեմ. ե՛լ, ա՛ռ մահիճդ եւ տունդ
զնա»: Անդամալոյծը անմիջապէս բոլորին
առջեւ ոտքի ելաւ, վերցուց իր մահիճը
եւ դուրս ելաւ: Բոլորն ալ զարմացան.
կը փառաւորէին զԱստուած եւ կ'ըսէին.
«Այսպիսի բան բնաւ տեսած չէինք»:

«ՈՒԽՏԻՆ ՏԱՊԱՆԱԿԸ»

ԿԻՐԿՐՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԻԱԷ ԱՆԹԻՐԱՏ
ՓՈԽԱՊՐՈՒԹԻՒՆ

ԳԱՌԵՐԿ ԱԷ. Ք. Գ.

ԿԻԼԻԿԻՈՅ ԱՂԵՏԸ

2

Սահմանադրութեան հռչակման «ուրախու-
թիւններուն միջոց»ին, Սահակ Կթղ. Խապայեան
կը գտնուէր Ատանա, ուր հիւպատոս մը իրեն ըսած
էր. «Ես շատ լաւ չեմ տեսներ այս փոփոխութիւնը,
եւ կը վախնամ՝ թէ օր մը արիւնոտ տեսարաններու
ակնատես ըլլանք»⁴⁸²:

Մինչեւ Աղէտը, 8-9 ամիսներու ընթացքին՝

Ատանայի եւ շրջակայքին մէջ արձանագրուած են բազմաթիւ դէպքեր:

Յակոբ Յ. Թերզեան անոնցմէ 20 «կարեւոր»ները յիշած է. սպառնական տարածայնութիւններ, հակաքրիստոնեայ եւ մանաւանդ հակահայ ցոյցեր, շէրիաթի պաշտպանութեան հրապարակային յայտարարութիւններ եւ թուղակներ, դաւադիր արարքներ, ապստամբութեան եւ յարձակման սուտ լուրեր, սպանութիւններ եւ այլ չարագործութիւններ⁴⁸³:

Կոստակալ Ճէվատ պէյ, որուն աչքերուն առջեւ շատցած էին մուկերն եւ վայրագ արարքները, իբրեւ «հանդիսատես» էր դիտած: Դաւադիր ծրագիրը Ատանայի Կոստակալ Պահրի փաշան իր պաշտօնէն հեռացնելով է, որ տեղը նշանակած էր «Երլտրդի պալատին էնթրիկներով եւ հայաջինջ ու երկրակործան քաղաքականութիւններով խմորուած» այս պէյը⁴⁸⁴:

Նման Կոստակալի մը նշանակումին աւելցած էր նահանգին հրամանատարութեան յանձնումը արքունի «դժոխային ծրագիրներուն գործիք» եւ Մարաշի 1895-96-ի ջարդը կազմակերպած Ֆէրիք Մուսթաֆա Ռէմզի փաշայի. ոստիկանական զօրքերուն հրամանատարութիւնն ալ յանձնուած էր Ահմէտ պէյի, որ «անուս, մուկեռն եւ բռնապետութեան բոլոր գարշութիւններով» ապականած մէկն էր⁴⁸⁵:

Այն օրերուն, Եպարքոս Հիւսէյին Հիլմի փաշայէ նա'եւ Ատանայի Կոստակալութեան ղրկուած հեռագիր մը՝ հրամայած էր Միութիւն եւ Յաւանքի մութիւն Կոստակցութենէն դատ որ-եւէ այլ կոսակցութիւն չճանչնալ⁴⁸⁶:

Հրամանին հասցէն, առաջնահերթաբար հայ կոսակցութիւնները չէին, այլ թուրք ընդդիմադիր կոսակցութիւնները: Սակայն նենգաժէտ թուրքը պիտի ընտրէր հայ կոսակցութիւնները⁴⁸⁷, որոնք ժողովուրդին հետ, կռահելով իրենց շուրջ նիւթուած մեքենայութիւնները, հետզհետէ քաշուած էին նոյնիսկ ցոյցերէ: Անոնց մէջ՝ բաղդատաբար այլ նահանգներուն հայութեան եւ կոսակցական մարմիններուն՝ արդէն ժլատ գտնուած էին, ազատութեան հռչակումի առաջին օրերէն⁴⁸⁸:

Հիլմի փաշա թուրքերու կողմէ հայ կոսակցութիւններուն ընկալումը՝ Համիտեան շրջանի ընկալումին դարձուցած էր իր հեռագրով, «թերեւս անգիտակցաբար»⁴⁸⁹:

Թերզեանէ յիշուած 20 «կարեւոր» դէպքերէն առաջինը՝ ջարդի սպառնալիքներուն մուտքն էր

մինչեւ նահանգի հայութեան անքուն գիշերները: Սպառնալիքները «Բամազանի Պայրամին օր»ը ցոյց կու տային իբրեւ սկիզբ⁴⁹⁰:

Երբ սարսափի ճգնաժամերուն մէջ, քաղաքականօրէն հրապարակէ քաշուած էին թէ՛ կոմիտէներ եւ թէ՛ ժողովուրդ, Հայ եկեղեցին «հակառակ իրողութիւններուն, եւ հակառակ նոյնիսկ կասկածներուն» կը յորդորէր ցոյց տալով «ա'յն միջոցները, որոնցմով կարելի պիտի ըլլար նպաստաւորուիլ Սահմանադրութենէն»⁴⁹¹. այսինքն՝ տեղւոյն թրքացեղ ժողովուրդներուն հանդէպ բարեացակամ տրամադրութիւններ ունենալ. ականջ չդնել չարամիտ տարածայնութիւններուն. արթուն մնալ թէ՛ համայնքային եւ թէ՛ երկրին շահերուն պաշտպանութեան մէջ. անհատական կամ հաւաքական իրաւագրկումներու պարագային՝ նախ առանց չափազանցութիւններու եւ սուտերու դիմել տեղական իշխանութեան, եւ ետքը՝ ապարդիւն մնալու պարագային՝ դիմել Առաջնորդարան, որ «միշտ պատրաստ եղած է, ինչպէս բռնապետութեան, նոյնպէս ազատութեան օրերուն մէջ» իր ժողովուրդին ցաւերով հետաքրքրուիլ եւ պաշտպանել անոր իրաւունքները. ինքնակրթութեան աշխատիլ, որովհետեւ հայութիւնն ալ ունի տգէտներ. ուսման հետամուտ ըլլալ՝ որովհետեւ «ապագան արժանիք ունեցողին է»⁴⁹²:

Եւ յանկարծ Կ. Պոլսոյ մէջ՝ «յետադիմական շարժում»ը կամ «31 Մարտի Պատահար»ը, որուն առաջնակարգ լուրսնաբեր շէրիաթին վերահաստատումն էր: Այս դէպքը 11 օրեր պիտի տեւէր եւ յանգէր Սուլթան Համիտի գահընկեցութեան⁴⁹³: Նոյն ատեն պիտի սկսէր եւ լրանար Կիլիկիոյ աղէտին առաջին հանգրուանը:

Յետադիմական շարժումը մեծ դեր խաղաց, սրելով խորժակները, եւ Կիլիկիոյ աղէտին առաւել ծաւալման նպաստեց⁴⁹⁴:

Կիլիկիոյ մէջ ալ շէրիաթի վերահաստատման լուրսնաբեր էր, որ ամենաբարձրը ձայնուեցաւ եւ սպառնաց, ինչպէս յիշուեցաւ, ջարդել «Բամազանի Պայրամին օր»էն: Ծայրայեղ իսլամական քարոզչութեան ամենէն բացայայտ արարքն ալ սա եղաւ:

«Առտու մ'ալ, - գրած է Թերզեան, - խոշոր գիրերով լայնածաւալ ահագին յայտարարագիր մը փակցուած գտնուեցաւ Ատանայի ամենէն բանուկ հրապարակը, բարձրացող ժամա-

ցոյցի աշտարակին վրայ, ուր գրուած էր թէ՛ Հնդկաստանի, Եգիպտոսի եւ ուրիշ ամէն կողմերու վեց հարիւր միլիոն իսլամները միացած՝ Անգլիական կառավարութեան դիմած են, պահանջելով որ Իսլամական չէրիաթը պահպանուի, հակառակ պարագային՝ իրենց արեան վերջին կաթիլը թափելու պատրաստ են չէրիաթին պաշտպանութեան համար»։ Վաւերագրողը աւելցուցած է, թէ այս յայտարարագրէն հազարաւոր օրինակներ ընդօրինակուելով, ինչպէս բերանէ բերան խօսուելով տարածուած են, եւ ոչ-իսլամներու, մանաւանդ հայերուն նկատմամբ սոսկալի հակառակութիւն մը բռնկեցուցած, որովհետեւ, ըստ մոլեզնածներուն, անոնք՝ «Սահմանադրութեան պահպանումով չէրիաթը վերցնել կ'ուզէին»⁴⁹⁵։

(Շարունակելի 33)

ԱՂԲԻԻՐՆԵՐ ԵՒ ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 482.- ՄԱՊ, է 35:
 483.- Տե՛ս Յակոբ Յ. Թերզեան, Կիլիկիոյ Աղէտը, Կ. Պոլիս, 1912, էէ 9-23:
 484.- ՄԱՊ, է 25:
 485.- Անդ:
 486.- Ն, է 34:
 487.- Ն, է 35:
 488.- Անդ:
 489.- Անդ:
 490.- ԹԿԱ, է 10:
 491.- ՄԱՊ, է 26:
 492.- Տե՛ս ն, էէ 27-29:
 493.- Ըստ առարկութեան մը (E. J. Zürcher իր ‘The Ides of April’, համացանց), Իթքիհատի կողմէ տարածուած ամբաստանութիւն մըն էր, թէ ապստամբութեան ետին կը կենային Սուլթան Համիտն ու Իսլամ ընդդիմութիւնը։ Առարկողը հակամէտ է խորհելու, թէ եղածը ընդհանուր դժգոհութեան մը պոռթկումն էր, թէ տարբեր խմբաւորումներ՝ տարբեր խնդիրներով դժգոհ էին Սահմանադրական վարչակարգէն։ Ան ապստամբութեան շարք մը ազդակներ թուած է. 1) Դժգոհ էին Համիտեան կառոյցին նախկին անդամները, ներառեալ՝ հազարաւոր լրտեսներ, որոնք գրկուած էին իրենց նիւթական շահերէն եւ դիրքերէն։ Նաեւ՝ հազարաւոր գործազուրկ պետական

պաշտօնեաներ, որոնք կառավարական գրասենեակները աւելորդ տեղ թեմաւորած էին։ 2) Դժգոհ էին բանակին մէջ։ Բանակը նեղուած էր ընդմէջ մէքթալը սպաներուն՝ որոնք ուսանած էին զինուորական դպրոցներու եւ ակադիմիային մէջ, եւ ալայլը սպաներուն՝ որոնք զինուորական կարգերուն մէջ ժամանակի ընթացքին բարձրացած էին, եւ տեղաւորուած Առաջին Բանակէն ներս, որ Կ. Պոլսոյ մէջ եւ շուրջը կը գտնուէր։ 1908-ին, մէքթալները ալայլներէ շատերուն տեղերը գրաւած էին՝ զանոնք պաշտօնագրկելով կամ աստիճանագրկելով, եւ կասեցնելով պաշտօնի բարձրացման դրութիւնը։ Եւ ի շարս այլ փոփոխութիւններու՝ արգիլած էին փորձերու ժամանակ կրօնական լուացումներու եւ աղօթքի դադարները։ 3) Դժգոհ էին իսլամական Օրէնքի ժողովուրդին մեկնաբանները՝ ուլամաները. անոնք մթնոլորտին փոփոխութենէն սպառնացուած կը զգային։ 4) Թուրք ընդդիմութեան անհամաձայնութիւնը. Իթքիհատին կը հակադրուէր Ահրար Կուսակցութիւնը, որ կը փնտրէր անոր փառապաշտութիւնը իբր անպատասխանատու, նաեւ կը փնտրէր անոր ձգտումը՝ իր ձեռքին մէջ կեդրոնացնելու իշխանութիւնը։ Եւ 5) Իթքիհատը հասարակաց կարծիքին հաղորդ չէր, այլ տարուած էր ժողովուրդը աստիճանաբար դաստիարակելու դրապաշտ, ազատական եւ ազգայնական գաղափարներով (էէ 71-72)։ Zürcher կ'ընդունի, թէ իսլամական արմատականութիւնը «մեծ դեր» ունեցաւ ապստամբութեան մէջ, սակայն միայն այդքան, է 73։

Այս բոլորը եւ այլք կրնային ազդակներ ըլլալ, բայց եթէ յիշեալներն ու չիշեալները չձեռնածուէին փառապաշտութեամբ մը եւ զանգուածները շարժող ոգիով մը, ապա տեղի չէր ունենար 31 Մարտի Պատահարը։ Քաղաքականութեան վերին հեղինակութիւնը սուլթանն էր, զանգուածները շարժող ոգին ալ մոլեռանդ իսլամութիւնը։

494.- ԹԿԱ, է 23:

495.- Ն, էէ 10-11:

ՏՆՕՐՀՆԷՔ

Տնօրինէք փափաքող
 ընտանիքները,
 թող բարեհաճին դիմել
 Տ. Գառնիկ Աւ. Քինյ. Գոյունեանի,
 հեռաձայնելով
 514 909 5203 թիւին:

ԱՅԵԼԵՑԻՔ ԵԿԵՂԵՇԻՄՅԱ ԴԻԱՏԵՏՐԻ ԷՁԸ
 ԵՒ ՁԵՐ ՀԱԽԱՆՈՒԹԻՒՆ ԵՐԱՏԵՑԻՔ (like).
www.facebook.com/SourpHagopChurchMontreal
 ԱՅԵԼԵՑԻՔ ԱՁԵՒ
 Ս. ՅԱԿՈԲ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՇԻՄ ԿԱՔԵՁՐ՝
www.sourphagop.net